**Ֆինանսական հաշվետվությունների աուդիտ**

-Աուդիտի պետք է ենթարկվի ՖՀՄՍ-ներին համապատասխան պատրաստված Պատվիրատուի տարեկան ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31-ը դեկտեմբերի 2018թ., այդ ամսաթվին ավարտված տարվա համար շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին և դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունները, ինչպես նաև հաշվապահական հաշվառման քաղաքականության մասին էական տեղեկատվություն և այլ բացատրական ծանոթագրություններ:

- Աշխատակիցների միջին ցուցակային թվաքանակը կազմում է 3200 անձ: Քաղ-իրավական պայմանագրերի քանակը՝ 300:

Հիմնադրամն ունի 6 ֆակուլտետ, կլինիկաներ, ուսումնական կենտրոն, լաբորատորիաներ, դպրոց, քոլեջ 84 մասնագիտություն, 10414 ուսանող, որոնցից 1974-ի ուսման վարձը լրիվ փոխհատուցվում է պետության կողմից ուսանողական նպաստի ձևով - Պատվիրատուի եկամուտները 2018թ համար կկազմի մոտ 13մլրդ ՀՀ դրամ:

Հիմնական միջոցների միավորների քանակը՝

- Շենքեր, շինություններ՝ 31 միավոր (բաղկացուցիչներով)
- Արտադրական տնտեսական գույք՝ 21,488 միավոր
- Տրանսպորտային միջոց՝ 23 միավոր (բաղկացուցիչներով)
- Գրադարանային գույք՝ 518,954 միավոր

Պաշարների միավորների քանակը՝ 1,650 միավոր:

Գործընկերների քանակը՝ 625:

Եկամուտների և ծախսերի հաշվառման հաշիվների քանակը՝ 234:

Բանկային հաշիվների քանակը՝ 45:

Տարեկան փաստաթղթերի քանակը՝ մոտ 500 թղթապանակ:

Աուդիտ իրականացնող անձը պետք է իրականացնի աուդիտորական ընթացակարգեր Հիմնադրամում:

Աուդիտորը պետք է մասնակցություն ունենա հիմնական միջոցների, պաշարների, ուսանողների պարտքերի գույքագրմանը:

Աուդիտորական ընթացակարգեր պետք է իրականացվեն նաև դրամաշնորհային ծրագրերի գծով, համաձայն՝ դրամաշնորհների պայմանագրերի, սահմանված ընդհանուր պահանջների և կազմված հաշվետվությունների:

Դրամաշնորհային ծրագերի գծով նախնական տեղեկատվությունը հետևյալն է.

Լիպիդների անոմալ կոնցենտրացիայով հիվանդների մոտ Amla էքստրակտի էֆեկտիվության և անվտանգության ռանդոմիզացված,կրկնակի կույր,պլացեբո վերահսկվող կլինիկական 3 ամսյա հետազոտություն, ֆինանսավորման գումար՝ 14984144 ՀՀ դրամ

Միջազգային համագործակցություն Եվրոպայում վնասվածքային ուղեղային վնասվածքների վերահսկումը բարձրացնելու նպատակով INITIatE, ֆինանսավորման գումար՝ 10785468 ՀՀ դրամ

N543710-Tempus-1-2013-1-AM Tempus-SMGR, ֆինանսավորման գումար՝ 3122861ՀՀ դրամ

N544331-Tempus-1-2013-1-AM Tempus-MedGen, ֆինանսավորման գումար՝12162601 ՀՀ դրամ

<<Կրթության բարելավում>> վարկային ծրագիր ԵՊԲՀ <<Ստոմատոլոգիական կրթության գերազանցության կենտրոն>> ծրագիր, ֆինանսավորման գումար՝ 94620475ՀՀ դրամ

Փոքրամասնությունների առողջության և առողջության անհավասարության միջազգային հետազոտություններ և վարժասարքեր, ֆինանսավորման գումար՝ 7232597ՀՀ դրամ

Հետազոտության ներուժի զարգացումը Արևելյան Եվրոպայում, ֆինանսավորման գումար՝ 15581782ՀՀ դրամ

Պալիատիվ խնամքում վաթսուն մասնակիցների կրթում, ֆինանսավորման գումար՝ 9641500ՀՀ դրամ

Ասպիրանտական ծրագրեր հանրային առողջության և սոց.գիտությունների ոլորտում, ֆինանսավորման գումար՝ 186849688ՀՀ դրամ

UEL UNIVERSITY OF EAST LONDON, ֆինանսավորման գումար՝ 480963ՀՀ դրամ

The company of Biologists, ֆինանսավորման գումար՝244845 ՀՀ դրամ

Ընդհամենը դրամաշհնորհային ծրագերի գծով՝ **355706924 ՀՀ դրամ**

Աշխատակիցների անալիտիկ հաշվառումը վարվում է հատուկ պատվերով մշակված էլեկտրոնային ծրագրով, թանգարանային և գրադարանային գույքի անալիտիկ հաշվառումը կատարվում է առանձին էլեկտրոնային ծրագրերով իսկ հիմնական միջոցների և պաշարների անալիտիկ հաշվառումը կատարվում է ծրագրային փաթեթով, որում ամփոփվում են սինթետիկ հաշվառման տվյալները՝ ակտիվների, պատավորությունների, սեփական կապիտալի, եկամուտների և ծախսերի վերաբերյալ:

Կատարողը պետք է ապահովի՝

1. Մասնագիտական հատկանիշներ (աշխատանքային փորձ)
   a. Մասնակցի ընդհանուր աշխատանքային փորձ - 3 տարի
   b. Աշխատանքային փորձը ԲՈՒՀ-ական (կրթական) համակարգում -3 տարի
   c. Աշխատանքային փորձը ՖՀՄՍ-ների կիրառման ոլորտում - 3 տարի
2. Աշխատանքային ռեսուրսներ (առաջադրանքի կատարման համար առաջարկվող աշխատակազմ)
   d. Անձնակազմի ընդհանուր փորձառությունը-3 տարի
   e. Անձնակազմի փորձառությունը ԲՈՒՀ-ական (կրթական) համակարգում-3տարի
   f. Անձնակազմի որակավորումը ՖՀՄՍ-ների կիրառման ոլորտում-3տարի

3. Ծառայությունների մատուցման առաջարկվող կարգ (մեթոդաբանություն)

g. Աշխատանքների անվանումը, ծախսվող ժամանակը

h. Մեթոդաբանություն

- Անցկացված աուդիտի արդյունքում աուդիտ իրականացնող անձը պետք է արտահայտի կարծիք առ 31-ը դեկտեմբերի 2018թ., այդ ամսաթվին ավարտված տարվա համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

- Աուդիտը պետք է իրականացվի աուդիտի միջազգային ստանդարտներով: Միջազգային ճանաչված աուդիորական ցանցի անդամ կազմակերպություն:

Ծառայությունները կատարելուց հետո աուդիտ իրականացնող անձը պետք է ներկայացնի աուդիտորական եզրակացություն, նամակ ղեկավարությանը:

Կատարողը պետք է ունենա

Աուդիտորական գործունեության իրականացման լիցենզիա:

Առողջապահական կազմակերպության աուդիտի իրականացման առնվազն 5 տարվա փորձ: Ընդ որում, այս չափանիշը չի տարածվում միջազգային ճանաչում ունեցող աուդիտորական կազմակերպությունների վրա (https://www.accountancyage.com/rankings/accounting-firms-rankings,http://accountants.entrepreneur.com/,http://www.vault.com/wps/portal/usa/rankings/landing?rankingId=177&regionId=0 կայքերից որևէ մեկում տեղադրված ցանկում ներառված լավագույն 10 աուդիտորական ցանցերի լիիրավ անդամ հանդիսացող կազմակերպություններ),

Աուդիտորական կազմակերպության պատասխանատու աուդիտորը պետք է ունենա առողջապահական ոլորտի կազմակերպությունների աուդիտի մասնակցության առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ և փորձի ընթացքում առնվազն 2 առողջապահական կազմակերպության աուդիտի իրականացման փորձ և միջազգային հաշվապահական և/կամ աուդիտորական որակավորման (օրինակ՝ ԷՑ—ՍԻ—ՍԻ—ԷՅ, ՍԻ—ՓԻ—ԷՅ, ՍԻ—ԱՅ—ԷՍ—ԷՅ) փուլերի առնվազն կեսն ավարտած լինելու փաստը հավաստող փաստաթուղթ (վկայական) կամ Հայաստանի աուդիտորների և հաշվապահների ասոցիացիայի կամ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված մարմնի կողմից տրված որակավորում: